

ՈՒՄ-ՈՎ ԱՆԿԱՏԱՐԻ ԱՌԱՋԱՅԻՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ա. Ս. ԽԱՐԳԱՐՅԱՆ

Ինչի՞ց և ինչպե՞ս է առաջ եկել ում-ով անկատարը, որ, սահմանականի ներկա և անցյալի անկատար ժամանակներ կազմելով, մի խումբ բարբառների ճյուղային պատկանելությունը որոշելու հիմք է ծառայում:

Նախ՝ ծանոթանանք հարցի պատմությանը: Առաջին անգամ հայ լեզվաբանական գրականության մեջ ում-ով անկատարի ծագման մասին խոսել է նշանավոր հայագետ Ա. Այտընյանը: Նա ասում է. «Այս կազմության ծագումն ու հավանական մեկնությունը (ընդգծումն իմն է — Ա. Մ.) հետևյալն է. ում բայակերտ մասնիկը՝ նույն գավառականին հոլովմանց ներգոյականն է. և՛ իւոսում եմ, ըլում ա. շեն էրվում, այնպես մերձավոր ներկա և անկատար են՝ ինչպես գրաբար աներևույթ ներգոյականով՝ ի խօսել եմ, յանել էր, ի ծաղկել էր, ի լինել է. շեն յայրել (խոսելու հետ եմ, աճելու, ծաղկելու վրա էր, և այլն)»¹:

Սույն մեկնությունը, որ հենց ինքը՝ Այտընյանը ոչ թե հիմնովին ապացուցված, այլ սոսկ հավանական է համարում, հետագայում առանց որևէ վերապահության ընդունել են գրեթե բոլոր այն լեզվաբանները (Հ. Պետերման, Ք. Պատկանյան, Ս. Պալասանյան, Ս. Սարգսյանց, Գ. Վանցյան, Մ. Արեղյան, Հր. Աճառյան, Ար. Ղարիբյան, Լ. Արրահամյան, Գ. Ջահուկյան և ուրիշներ), որոնք առիթ են ունեցել խոսելու ում-ով անկատարի առաջացման մասին: Եվ իրոք. Այտընյանին հետևելով՝ նրանք բոլորն էլ գտնում են, որ ում-ն իրրև սահմանակերտ ծագում է ներգոյականից:

Եթե նկատի չունենանք Ալ. Տոմսոնին, որ չէր ընդունում ում-ով անկատարի ծագման մասին իր ժամանակին եղած բացատրությունները և գտնում էր, որ դրանք «այսպես թե այնպես մնում են իրրև ենթադրություններ»², մյուս բոլոր հայագետները պաշտպանում են մի միասնական տեսակետ:

Ում-ով անկատարը կապելով ում-ով ներգոյականի հետ և բխեցնելով դրանից, նրանք, սա-կայն, այն հարցում, թե ինչպե՞ս կամ ի՞նչ ձևով է առաջ եկել այդ դերբայը, միատեսակ բացատրություն չեն տալիս և բաժանվում են երկու խմբի. մի մասը (Հ. Պետերման, Ք. Պատկանյան, Ս. Սարգսյանց, Ս. Պալասանյան, Գր. Վանցյան, Հր. Աճառյան, Ար. Ղարիբյան, Գ. Ջահուկյան) գտնում է, թե ում-ով անկատարը սերում է բայարմատի կամ բայահիմքի ներգոյականի ձևերից և ըստ այդմ էլ, ասենք, շարժում եմ, զորժում եմ, գրում եմ, լսում եմ նշանակում են՝ «շարժի մեջ եմ», «գործի մեջ եմ», «գրի մեջ եմ», «լիսի մեջ եմ» և այլն: Մյուսները (Մ. Արեղյան, Ա. Արրահամյան, Ս. Ղաղարյան) գտնում են, թե ում-ով անկատարը «ծագում է անորոշ դերբայի ներգոյականի հոլովաձևից» և ըստ այդմ էլ այլ բան չէ, քան անորոշի ներգոյականի այնպիսի ձևերի կերպարանափոխությունը, ինչպիսիք են, ասենք, գնալում եմ, բերելում եմ, զարմա-նալում եմ և այլն:

Առաջիններն իրենց տեսակետը հաստատելու համար ոչ մի վավերական օրինակ չեն բերում, որովհետև, ինչպես հայ բազմադարյան գրավոր աղբյուրների տվյալներն են ցույց տալիս, այնտեղ ընդհանրապես բացակայում է ում-ով անկատարը, և եթե առանձին դեպքերում պատահում են դրան համընկնող ձևեր (հմտ. զորժում և զորժում եմ, չի զորժում եմ, կովում և կուում չի կուում եմ), ապա դրանք բացառապես համապատասխան գոյականների ներգոյականի հոլովաձևերն են և ոչնչով չեն կապվում բայարմատի կամ բայահիմքի հետ:

Իրենց տեսակետը հաստատող որևէ հավաստի օրինակ չեն բերում նաև մյուս խմբի լեզվաբանները. պրոֆ. Մ. Արեղյանը առաջինը գտնելով, որ ի նախորդով անորոշի ներգոյականի («ի գալ եմ») հետ «միաժամանակ գործածվել է՝ գալում եմ, գալում ես, գալում է. գալում էի, գալում էիր, այսպես նաև՝ տալում եմ... լալում եմ, լալում ես և այլն, որ սովորական են որոշ բարբառ-

¹ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 203:

² А. Л. Томсон, Историческая грамматика современного армянского языка г. Тиф- лиса, СПб, 1890, էջ 231:

յերի մեջ: Կան նաև՝ գնալում եմ... և նմանները»³, հետևյալում է. «Սակայն այս նոր ձևի ամենավաղ շրջանից արդեն տեսնում ենք, որ անորոշ դերբայի այս ներգոյականն իբրև սահմանական ներկայի մի բաղադրիչ մաս՝ կրել է որոշ փոփոխություն, այն է՝ «ում» վերջավորությունը դրվել է անորոշ դերբայի «ալ», «ել» վերջերի փոխանակ, ուրեմն գնալում եմ, բերելում եմ, զամալում եմ ձևերի փոխանակ՝ գնում եմ, բերում եմ, զամանում եմ: Այս կազմությունը գտնում ենք արդեն Վարդանի պատմության մեջ XIII դարում «Քեզ աղօթք եմ առնում» (= քեզ աղօթք եմ անում), փոխանակ «են առնելում» ձևի: Դա ցույց է տալիս, որ արևելյան բարբառների մեջ XIII դարից առաջ արդեն այդ ձևը հաճախված պիտի լիներ իբրև սահմ. ներկայի մի բաղադրիչ մաս, որպեսզի «առնելում եմ» ձևը դառնար «առնում եմ»⁴:

Պրոֆ. Մ. Աբեղյանի այդ բացատրությունը կարելի է լինե՞ր ընդունել, եթե «առնում եմ», «գնում եմ», «բերում եմ», «զամանում եմ» և այլն իրենց համապատասխան նախավոր ձևերը (առնելում եմ, գնալում եմ և այլն) ունենային գրավոր աղբյուրներում: Այնինչ հայոց լեզուն այդպիսի մի օրինակ անգամ մեզ չի տալիս. անորոշ դերբայը ում-ով տրականի և հետևաբար՝ լակ ի նախորդվ ներգոյականի ձև անցյալում երբեք չի ունեցել ո՛չ օժանդակ բայի հետ և ո՛չ էլ առանձին գործածությամբ. անորոշի ներգոյականը կազմվել է զուտ նրա հալցականից՝ ի նախորդվ, որը և ինչպես առանձին, այնպես էլ օժանդակ բայի հետ բազմաթիվ գործածություններ ունի գրարարում և միջին հայերենում:

Հարցի պատմության այս համառոտ ակնարկը ցույց է տալիս, որ հայ լեզվաբանական մտքի՝ ավանդական, մեկից մյուսին փոխանցվող այն ըմբռնումը, թե ում-ով անկատարը ծագում է ում-ով ներգոյականից, կամ երկու դեպքում էլ մենք գործ ունենք ծագումնաբանական միևնույն երեւոյթի հետ, լեզվական համապատասխան փաստերով չի հաստատվում և իսկապես մնում է իբրև ենթադրություն⁵:

Թե ինչի՞ց է ծագում ում-ով անկատարը և արդյոք կապվո՞ւմ է ում-ով ներգոյականի հետ, հարկավոր է ամենից առաջ պարզել երկու կարևոր հարց. ա) ո՞ր ժամանակից է սկսվում նրա գործածությունը հայոց լեզվում (ավելի ճիշտ՝ գրավոր աղբյուրներում) և բ) լեզվի տվյալները հաստատո՞ւմ են արդյոք, որ ծագումնաբանական կապ գոյություն ունի ում-ով անկատարի և ում-ով ներգոյականի միջև:

Առաջին հարցի մասին, որի թե՛ լեզվա-պատմական և թե՛ բանասիրական նշանակությունը ակներև է, հետևյալը պետք է ասել. հայագիտության մեջ ընդունված է ում-ով անկատարի գործածության սկիզբը համարել XII դարը և առհասարակ նրա հնագույն գոյությունը հաստատել երկու օրինակով, այն է՝ «Ապա հիւանդին թապիրն մաշում լինի...»⁶ և «Ասացի թէ,— «զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն հետ քեզ լաւ են, և քեզ աղօթք եմ առնում»⁷:

Այդ երկու օրինակներից բացի, որոնցից առաջինը իրոք XII, իսկ երկրորդը իբրև թե XIII դարին է վերաբերում, ում-ով անկատարի մի այլ «վկայություն» հայ մատենագրության մեջ մինչև XVII դարը մենք չենք տեսնում: Սա էլ հենց կասկածի տակ է առնել տալիս «մաշում» և «են առնում» ձևերի ում-ով անկատարի հնագույն օրինակներ լինելու իսկությունը:

Մեզ մինչև հիմա հայտնի չէ մի որևէ լեզվական իրողություն, որ, իբրև լեզվի նոր որակի տարր, մի անգամ մուտք գործած լինի գրավոր հուշարձանների մեջ և շարունակի հետզհետե հասանալի գործածվել այդտեղ: Հետևաբար՝ եթե ում-ով անկատարը իբրև այդպիսին ձևավորված էր արդեն XII կամ XIII դարերում, ապա հասկանալի է, որ գնալով պետք է ավելի ու ավելի աճեր ու ծավալվեր, պետք է հաճախակի գործածություն ստանար գրականության մեջ: Բայց քանի

3 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 314:

4 Նույն տեղում, էջ 323—324:

5 Պատահական չէ, որ Հր. Աճառյանը հաստատ համոզված լինելով, որ ում-ով անկատարը ծագում է ում-ով ներգոյականից, այնուամենայնիվ հետևյալ խոստովանությունն է անում. «Թեև իր ձևի ծագման պատմությունը լուսաբանելու համար կան բավական աղբյուրներ, բայց ում ձևի մասին ոչինչ չունենեմ (այս և հաջորդ ընդգծումն իմն է — Ա. Մ.): Եթե կան ձևագրերում հազվագյուտ հիշատակագրություններ, դրանք էլ հրատարակված չեն: Ուստի առայժմ մենք կարող ենք երազարարություններ միայն անել, որոնց ստուգումը կմնա ապագային» («Լիակատար քերականություն հայոց լեզվի», հատ. 4, Բ գիրք, էջ 173):

6 Մ. Հերացի, Զերմանց միթարություն, Վենետիկ, 1832, էջ 61:

7 «Մեծն Վարդանայ Բարձրբերդեցույ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 207:

որ դա այդպես չէ, ապա հարց է ծագում՝ ի՞նչ են Մ. Հերացու գործածած «մաշում» և վարդանի պատմության մեջ տեղ գտած «աղօթք են առնում» ձևերը:

Նախ՝ առաջինի մասին. փաստերը ցույց են տալիս, որ Մ. Հերացու գործածած «մաշում» ձևը ոչ թե մաշել բայի անկատարն է, այլ պարզապես արարերենից փոխառված բառ է: Դա հաստատվում է ոչ միայն նրանով, որ արարերենն իսկապես մաշում (աշարաղետ, չարաբաստիկ, չարագուշակ) բառ ունի, որ գործածական է նաև պարսկերենում⁸ ու թուրքերենում⁹, այլև մի քանի այլ հանգումանքներով. նախ՝ եթե մինչև այժմ մոթ էր մնում «Ապա թէ հիւանդին թտպիրն մաշում լինի...» նախադասության միտքը, ապա այս դեպքում լիովին պարզվում է, որ այն նշանակում է՝ «Ապա թե հիվանդին (հիվանդի համար) թտպիրը (հիվանդության դարմանումը) չարաղետ լինի»: Եվ այնուհետև. բուժման մի այլ եղանակի մասին խոսելով՝ դրանից մի փոքր առաջ Մ. Հերացին ասում է. «և ոչ ի հիւանդին թտպիրն խալատ լինի» (= «և հիվանդին թտպիրը (հիվանդության դարմանումը) խալատ (սխալ) լինի»): Ամենևին դժվար չէ նկատել երկու նախադասությունների կառուցվածքային և իմաստաբանական ընդհանրությունը, այն, որ, միևնույն ենթականերից բացի, նրանցում միատեսակ քերականական նշանակություն են արտահայտում նաև «լինի» բայի հետ կապակցվող թե՛ խալատ և թե՛ մաշում ձևերը. այսինքն՝ երկու դեպքում համասարապես նշվում է հիվանդության դարմանման արդյունքը, և հետևաբար՝ նրանք իրենց քերականական նշանակությամբ չեն տարբերվում իրարից: Եզրակացություն. Մ. Հերացու գործածած մաշում ձևը, հանձին որի մեկով ավելանում է արարերենից փոխառյալ բառերի թիվը (702 + 1 = 703), ում-ով անկատարի օրինակ չէ և չի հաստատում ու չի էլ կարող հաստատել նրա գոյությունը XII դարում:

Դառնանք երկրորդ օրինակին. Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվում են վարդան Մեծի (Արևելցու) «Պատմութիւն տիեզերական» աշխատության մի շարք ձեռագիր օրինակները, որոնցից ամենահինը¹⁰ պատկանում է 1307 թ.: Դժբախտաբար այդ նույն ձեռագիրը չի հասնում ժողովրդական լեզվի տարրերով հատկանշվող այն հայտնի հատվածին, ուր տեղ է գտել նաև «աղօթք են առնում» ձևը: Առաջին անգամ «աղօթք են առնում» ձևը մեզ ավանդում է 1589 թ. ձեռագիրը (N° 1770). նույնպիսի ընթերցված ունեն նաև N° N° 1899 (1676 թ.), 1482 (1678 թ.) և 3069 (XVII դ.) ձեռագրերը¹¹: Պատկերը, սակայն, այլ է N° N° 1518 (1591 թ.), 1487 (1657 թ.), 4584 (XVIII դ.) ձեռագրերում¹², որոնք «աղօթք են առնում»-ի փոխարեն ունեն «աղօթք են յառնում» ձևը. պահպանված ձեռագրերից մեկում էլ (N° 3078, 1608 թ.) որ, անշուշտ, ուշագրավ է, դուրս է մնացել հենց միայն այն նախադասությունը, որ ունի մեզ հետաքրքրող «աղօթք են առնում» կամ «աղօթք են յառնում» ձևը:

Ձեռագրային հիշյալ տվյալներն ու անհամապատասխանությունները ցույց են տալիս, որ իրական հիմք չկա «աղօթք են առնում» ձևին էլ XIII դարի լեզվական փաստ դիտելու կամ իրրև այդպիսին ճանաչելու համար: Այդ բոլորով հանդերձ, անվիճելի է, որ «աղօթք են առնում»-ը ում-ով անկատարի, այն էլ հնագույն, ձև է և, իրրև այդպիսին, մեծ արժեք է ներկայացնում նրա լեզվապես գործածության սկիզբը, այնպես էլ ծագումը պարզելու համար:

Բայց դա, իհարկե, միակ հնագույն օրինակը չէ. վերջերս, բարբախտաբար, հաջողվեց ի հայտ բերել մի նոր օրինակ՝ «Գրում ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին»¹³, որը ավանդված է 1474 թ. (վայրը՝ Վայոց-ձոր)՝ գրիչ Զաքեոսի կողմից: Այդ օրինակը, որ գրիչ Զաքեոսը գրել է ինքնաբերաբար՝ ձեռագրի տողատակի լուսանցքում, ավելի հին, ավելի հավաստի օրինակ է և առավել մեծ կարևորություն է ներկայացնում ոչ միայն ում-ով անկատարի առաջացման գաղտնիքը, այլև օժանդակ բայի լի>ի ձևափոխության հնությունը պարզելու տեսակետից:

Նույն այդ երևույթն էլ ցույց է տալիս, որ ում-ով անկատարն առաջ է եկել ժողովրդա-խոսակցական լեզվի մի որոշ հատվածում և, անշուշտ, բավական ժամանակ զրկված է եղել գրի առնելու, գրավոր խոսքում տեղ գտնելու իրավունքից: Եվ հետևաբար՝ ում-ով անկատարի «գրում

⁸ Տե՛ս «Персидско-русский словарь», М., 1960, էջ 500:

⁹ Տե՛ս Պ ե տ Ր ո ս Զ ե ք ի Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Մեծ Բաղարան Շամաներենն հայերեն, Պոլիս, 1912, էջ 808:

¹⁰ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր N° 3074:

¹¹ Տե՛ս ձեռ. N° 1770, էջ 78ա, ձեռ. N° 1899, էջ 363բ, ձեռ. N° 3069, էջ 469բ:

¹² Հաջորդական կարգով տե՛ս էջ 160ա, 183բ, 325բ:

¹³ Տե՛ս «Քն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 358:

ի» և «ալօրֆ Լեն Խոնում» ձևերը, իրրև նրա առայժմ հայտնի միակ առաջին նմուշները, «ապօ-րինարար» գրավոր խոսքի մեջ թափանցած ձևեր են: Բայց եթե, ասենք, XV, XVI դդ. ում-ով անկատարի գտնվում էր այդպիսի վիճակում, ապա XVII դարից սկսած ձևը է բերում գրականության մեջ գործածվելու լայն իրավունք, ինչպես, օրինակ՝ ուտում ալ (126), չեն տեսնում (163)¹⁴, խոսում չես (233), չէ կարում (118)¹⁵, փուշանում ա (416), չեն թաղում (416), լսում չեն (418), չւմ գիտում (259)¹⁶ և այլն:

Միանգամայն հակառակ կամ այլ պատկեր է երևան հանում ում-ով ներգոյականը. ի տարբերություն ում-ով անկատարի, դա, ընդհանրապես, գալիս է շատ հեռավոր անցյալից և իր ծագման սկիզբն ունի դեռևս V դարի հայ մատենագրության մեջ, ինչպես՝ «Ի բարձրաւանդակումս երուկալով ի տեղուդ...» (Մ. Խոր., 360), «Եւ նիզակ անարի ի ձեռին իւրում աշոյ և յահելումն ի վահան...» (Ն. տ., 361), «Որպէս և ասաց ոմն ի քնումն» (Եղ., 375)¹⁷, «Որոց և յառաջնումն իսկ աննախանձ ետ զկենդանութիւն» (Եղն., Եղծ. աղ., 6—7), «Քանզի յորում իցէ որ, այն յորում էն...» (Ն. տ., 17)¹⁸ և այլն և այլն¹⁹:

Հասկանալի է, որ եթե ում-ով անկատարի իրոք ծագումնաբանորեն կապված լիներ ում-ով ներգոյականի հետ, ապա չէր կարող միաժամանակ և զուգընթացաբար երևան չգալ վերջինիս ձև-վերի շարքում: Այնինչ V—XVI դարերի մատենագրության մեջ ում-ով ներգոյականի ձևերի կողքին ում-ով անկատարի գործածության գեթ մի օրինակ²⁰ մենք չենք գտնում: Բայց չէ՞ որ ում-ով անկատարի կազմելով սահմ. ներկա և անցյալի անկատար ժամանակներ՝ ում-ով ներգոյականից ծագած լինելու դեպքում իր գործածություններով պետք է որ գերազանցեր նրան և ավելի որոշակի ուրվագծեր իր առաջացման ու ձևավորման ընթացքը:

Կամ՝ այդ ինչպե՞ս է, որ լեզուն օժանդակ բայի հետ ում-ով ներգոյականի գործածության օրինակներ կարող է տալ մեզ, ինչպես՝ «Թրթումն լինի ի ստուերէն և ի լուսոյն, թուի թէ ի կրուումն են ընդ իրեար. լծ. Փիլ.» (Հրտթ. Փիլ. հատ. Բ., էջ 239, ծան.)²¹, «և ոչ է ի յայլում» (Յովհ. Որոտ., վերլ. Ստոր., 38), «յորում են» (Ն. տ., 152), «և տարանում եմք» (Գալ. Ան., Սահմ. իմաստ., 68) և այլն, իսկ բայահիմքից կամ անորոշից ում-ով կազմված ներգոյականի ոչ մի օրինակ երևան չի հանում գրավոր հուշարձաններում:

Այսպիսով, փաստերը եթե մի կողմից հաստատում են, որ իսկապես ում-ով ներգոյականը ծագում է նախորդի տրականից, սաղմնավորվել ու ձևավորվել է սկսել դեռևս V դարում, հայոց լեզվի զարգացման զուգընթաց աճել է ու ծավալվել, և գրավոր աղբյուրներն էլ շատ պարզ ու գեղեցիկ նրա պատմական կյանքի ուղին են ուրվագծում, ապա մյուս կողմից ցույց են տալիս, որ ում-ով անկատարի բնավ համընթաց չի գնացել ում-ով ներգոյականի հետ և իր գրավոր մկրտությունն ստանալով XVI դարի սահմանագլխին՝ չի սերում ոչ բայահիմքի և ոչ էլ անորոշի կարծեցյալ ում-ով ներգոյականի ձևից:

Արդ ինչի՞ց և ինչպե՞ս է առաջ եկել ում-ով անկատարը:

Կարծել, թե դա միանգամից է լույս ընկել և անցյալում չի ունեցել իր նախավոր ձևը կամ նախահիմքը, սխալ ու հակապատմական կլինի: Եթե լեզվի մեջ չկա մի որևէ իրողություն, որ ուշ երևան եկած լինելով՝ չունենա իր համապատասխան նախավոր կամ հին ձևը, ապա միանգամայն հասկանալի է, որ ում-ով անկատարը ես, որ ընդհանրապես անկախ չի գործածվում և օժանդակ բայի ձևերի հետ բաղադրվելով՝ սահմ. ներկա և անցյալի անկատար ժամանակներ է կազմում, առանց հաստատուն նախավոր ձևի չէր կարող ծնունդ առնել հայոց լեզվում և ստանալ լայն ու հաճախակի գործածություն:

¹⁴ «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938:

¹⁵ Ն. Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951:

¹⁶ Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом. СПб. 1898.

¹⁷ Օրինակները բերված են Ա. Ա. Արրահամյանի «Գրաբարի ձեռնարկ»-ում (Երևան, 1960) դետեղված տեքստերից:

¹⁸ Եզնիկ, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:

¹⁹ Տեղի սղության պատճառով հետագա շրջանի գրավոր աղբյուրներից օրինակներ չենք բերում:

²⁰ Պարզ է, որ այս դեպքում նկատի չեն առնվում ում-ով անկատարի երկու հնագույն օրինակները:

²¹ Սույն օրինակը բերվում է ըստ Հր. Աճառյանի «Հիականար քերականության» (տե՛ս հատ. 4, Բ գիրք, էջ 173):

Ում-ով անկատարի ծագման ճիշտ բացատրությունը տալու համար էլ տեսնենք, թե մինչև նրա երևան գալը սահմ. ներկայի և անցյալի անկատարի ինչ ձևեր է ունեցել հայոց լեզուն: Գրաբարի սահմ. ներկայի (օրինակ՝ գրեմ, գրես, գրէ, գրեմք, գրէք, գրեն) և անցյալի անկատարի (օրինակ՝ գրէի, գրէիր, գրէր. գրէաք, գրէիք, գրէին) հանրահայտ ձևերից բացի, որ հետագայում բղձականի են վերածվել, հայոց լեզվում գործ են ածվել ներկայի և անցյալի անկատարի նաև այլ ձևեր: Միջին հայերենում արդեն կը (ւլ կու) եղանակիչով կազմվում են ներկա և անցյալի անկատար ժամանակներ, որոնք շարունակում են իրենց գոյությունը արևմտահայ աշխարհարարում. որանցից զատ սահմ. ներկան և անցյալի անկատարն արտահայտվել են նաև բաղադրյալ ձևով՝ Լախդրիվ անորոշի (աներևույթ ներգոյականի) և օժանդակ բայի, ինչպես նաև ում ածանցով բաւանվան նախդրիվ տրականի և դարձյալ օժանդակ բայի կապակցությամբ:

Սահմ. ներկայի և անցյալի անկատարի արտահայտության այդ երկու ձևերը գալիս են հեռավոր անցյալից և իրենց հաստատուն հիմքերն ունեն նույնիսկ գրաբարում, ինչպես՝ «Յոյնք են ի գալ» (Գրք ինձ վնաս է քի տալ», «գտաճարս այրել է քի տալ» (Յովհ. Մամ., Պատմ. Տար., 194), «Ի համառօտն եմ ի փութալ» (Գր. Նար., 396, 404), «Չլնի աղէկ ի տեսանել» (Շ. Բագր., Պատմ., 70), «Մինչդեռ ի հսկման էին, տեսանէր Պատրիկն զնոյն տեսիլն» (Շ. Բագր., Պատմ., 56), «...Որպէս իրն, որ ի փոփոխման է» (Յովհ. Որոտն., Վերլ. ստոր., 56) և այլն:

Գրաբարի ումն վերջացած բառերի ներգոյականից և օժանդակ բայից կազմված ձևերը, որ շատ ավելի սակավ գործածություն են ունեցել, քան աներևույթ ներգոյականից (իմա՝ նախդրիվ անորոշից) և օժանդակ բայից կազմվածները, շարունակել են իրենց գոյությունը հայոց լեզվում և էջմարվում են նաև հետագայի գրավոր աղբյուրներում, ինչպես՝ «ԾՄՁ երակ կայ, որ ի շարժման է...» (Ամ. Ամաս., Օգ. բժշկ., 44), «և հանապազ սիրտն այս երակօքս ի շարժման կայ» (Ն. տ., 50), և այլն: Պետք է, սակայն, ասել, որ դրանք ընդհանրական բնույթ չեն կրել և, անշուշտ, հատուկ լինելով մի փոքր հատվածի՝ պահպանվել են միայն Նոր-Ջուղայի բարբառում, ինչպես՝ վախման ամ (սվախում եմ), շոմման ամ (սշողում եմ), դոդման ամ (սդողում եմ)²²:

Բսկ ինչպիսի՞ զարգացման ընթացք են ունեցել նախդրիվ անորոշի (աներևույթ ներգոյականի) և օժանդակ բայի բաղադրությամբ կազմված ներկայի և անցյալի անկատարի ձևերը: Գրավոր աղբյուրների բազմահարուստ փաստերը ցույց են տալիս, որ դրանք ևս ոչ միայն կես նախնապահին չեն մնացել. այլև բավական լայն ու ծավալուն կիրառություն են ստացել հայոց լեզվում: Օրինակ՝ «Խասիէթ զիրական և զառանձին գործն է ի ասել, զոր անուանեն յատուկ» (Մխ. Հեր., Ջերմ. մխ., 133), «...որչափ ևս առանել այնոցիկ՝ որք անասունք են ի բժշկել» (Գիրք Վատ., 211), «Պատասխանեաց կրօնաւորն — վասնզի յոյժ յամերք են ի զնալ» (ԷՃՄԳԱ, 25), «...հայոց կանթեղն է ի վառիլ» (Վ. Արև., Պատմ. տիեզ., 202), «...արիւնահամ ընդ բերանն ի դուրս է ի գալ» (Ամ. Ամաս., Օգ. բժշկ., 151) և այլն:

Դրականի այդ ձևերի համեմատությամբ, սակայն, շատ ավելի լայն ու ծավալուն գործածություն ունեն ժխտականի ձևերը, որոնք պատահում են միջին հայերենով գրված գրեթե բոլոր աղբյուրներում: Օրինակ՝ «որ իսկի չէին ի հասկնալ» (15), «չեն ի պատկառիլ» (27)²³, «չէ ի հասանել» (53), «չեն ի պակասել» (137)²⁴, «էր չես ի լալ և ասալախաբել» (55), «երբ իրար չեն ի հաշտել» (187)²⁵, «Դու չէիր ի լսելն» (303), «Չէր ի հանգչիլ» (305), «չէր ի դիտել» (51)²⁶, «և կարեցաւ արիւնն և այլ չէր ի ելնել»²⁷ և այլն:

Օրինականներից դժվար չէ նկատել, որ անորոշ դերբայը, իրրև գործողության ընդհանուր գաղափար արտահայտող բայաձև ի նախդիր առնելով՝ դրա հետ միասին ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող կամ հարակալող գործողություն. ըստ այդմ էլ, ասենք, ի տեսանել նշանակում է «տեսնելիս», տեսնելու ժամանակ», «տեսնելու մեջ», «տեսնելում» (=տեսնում), ի զնալ նշանակում է «զնալիս, զնալու ժամանակ» «զնալու մեջ», «զնալում» (=զնում), և այդպես նաև մնացած մյուս բոլոր ձևերը:

Ի նախդրով անորոշը նման նշանակությամբ բավական լայն ու ծավալուն գործածություն ունի և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, ինչպես՝ «և ի տալ (=տալիս, տալու ժամանակ — Ա. Մ.),

²² Տե՛ս նույն տեղում, էջ 180:

²³ «Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստարիի)», էջմիածին, 1918:

²⁴ Մ. Հ. Ե. ր. ա. ց. ի, Ջերմանց մխիթարություն:

²⁵ Ֆ. ր. ի. Կ., Բանաստեղծություններ, Երևան, 1941 թ.:

²⁶ Ն. Մ. ա. ռ., Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, 1893:

²⁷ Գ. ր. ի. Գ. ր. ի. ս., Քննություն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, Երևան, 1962, էջ 66:

զրարսմունսն չասաց սա՝ թէ «Դու ինձ յաշտ առնիցես» (Եզն., 350), «Եւ ի սաստկանալ (=սաստկանալիս, սաստկանալու ժամանակ — Ա. Մ.) պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեւաց Զրադաշտի ի Հայս» (Մ. Խոր., 366)²⁸ և այլն:

Միանգամայն պարզ է, որ եթե անորոշը ի նախդրի հետ միասին արտահայտել է ընթացքի մեջ գտնվող, հարակալող գործողությունն ընդհանուր նշանակություն, ապա նույն այդ հիմքի վրա շաղկապվելով օժանդակ բայի հետ, ցույց է տվել ենթակայի՝ մի ներկա կամ անցյալ ժամանակակետի համեմատությամբ ընթացքի մեջ գտնվող կամ հարակալող կոնկրետ գործողություն:

Պարզ է նաև, որ նախդրիվ անորոշը (աներևույթ ներգոյականը) օժանդակ բայի հետ բաղադրվելով ոչ միայն իսկապես սահմ. եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակներ է կազմել, այլև ինքնին բացառել է բայաֆիմից կամ հենց անուղղի կարծեցյալ ում-ով ներգոյականից սահմանական ներկա և անցյալի անկատար ժամանակներ կազմելու անհրաժեշտությունը: Այլ կերպ չէր էլ կարող լինել. եթե լեզուն, այն էլ դարերի ընթացքում, նախդրիվ անորոշի հիմքի վրա մշակել է սահմ. ներկայի և անց. անկատարի բաղադրյալ ձևեր, որոնք և հաստատվում են իրական փաստերով, ապա ինչու պետք է նույն անորոշի ում-ով ներգոյականից, որի համար մենք ոչ մի փաստ չունենք, ներկա և անց. անկատար ժամանակներ կազմեն. չէ՞ որ ի նախդրիվ անորոշը ներգոյականի նշանակություն արտահայտող գրավոր ավանդված միակ և ընդհանրական ձևն է ոչ միայն գրաբարում, այլև միջին հայերենում:

Այսքանից տրամաբանորեն հետևում է, որ ում-ով անկատարը և նրանից կազմված ներկա և անցյալ անկատար ժամանակները ծագումնաբանորեն են կապվել անուղղի միայն մի ճյուղվածի հետ, որ է՝ հենց նախդրիվ անուղղը կամ աներևույթ ներգոյականը:

Հայոց լեզվի պատմական փաստերը լիապես հաստատում են դրա ճշտությունը, շատ պարզ ցույց տալով, որ ժամանակակից հայերենի ում-ով անկատարը և նրանից օժանդակ բայի բաղադրությամբ կազմված ներկայի և անցյալի անկատարի ձևերը այլ բան չեն. քան աներևույթ ներգոյականի (նախդրիվ անորոշի) և օժանդակ բայի բաղադրությամբ կազմված ձևերի՝ ժամանակի ընթացքում կրած փոփոխությունների անմիջական արդյունքը: Այլ կերպ ասած, աներևույթ ներգոյականի և օժանդակ բայի բաղադրությամբ կազմված ներկայի և անցյալի ինչպես դրական, այնպես էլ ժխտական խոնարհման ձևերը, որոնք միջին հայերենի քաջագիտակ Ղ. Հովնանյանի հաստատմամբ «շատ աւելի ընտիր» են և «յլեցիալ գրաբարի վրայ»²⁹, հետզհետե աճելով ու ծավալվելով՝ ոչ թե մեռել ու դուրս են մղվել գործածությունից, այլ պարզապես կերպարանափոխություն են կրել և մի նոր կերպարանքով շարունակել իրենց գոյությունը հայոց լեզվում:

Անվիճելի է, անշուշտ, որ նրանց կրած կերպարանափոխությունը բավական բարդ ընթացք է ունեցել և սերտորեն պայմանավորվել է այն ընդհանուր տեղաշարժերով ու փոփոխություններով, որ ապրել է հայերենի բայական համակարգը իր երկարածիզ զարգացման ճանապարհին: Այսպես՝ ամենից առաջ հարկ է նկատել, որ աներևույթ ներգոյականից և օժանդակ բայից կազմված ներկայի և անցյալի անկատարի դրական և ժխտական խոնարհման ձևերը հավասարաշափ տարածում չեն գտել հայոց լեզվում. ի տարբերություն դրական խոնարհման ձևերի, որոնք, ինչպես նշել ենք, համեմատաբար սակավ են հանդիպում գրավոր աղբյուրներում, ժխտականներն, ընդհակառակն, հանդես են գալիս շատ ավելի լայն ու համընդհանուր կիրառությամբ: Հայտնի է, որ այժմ միայն միջին հայերենում, այլև արևմտահայ աշխարհաբարում սահմանական եղանակի ներկայի և անցյալի անկատարի ժխտականը արտահայտվում է աներևույթ ներգոյականի և օժանդակ բայի ժխտականի կամ դրանցից սերած համապատասխան ձևերով (հմտ. կու հասանէ — չէ ի հասանել, կու հաւատամ — չեմ ի հաւատալ, կու լսէիր — չէիր ի լսել, կը խաղամ — չեմ խաղաւ, կը գրեմ — չեմ գրեւ, կը լսէիր — չէիր լսեւ, կու տամ — չեմ ի տաւ և այլն): Նմանապես հայտնի է, որ դեռևս շատ վաղուց ժխտականի խոնարհման ձևերը էթե մի կողմից սկսել են կորցնել անորոշի ի նախդիրը, ապա մյուս կողմից նրա «լ» վերջնահնչյունը փոխարինել են «ր»-ով (հմտ. օրինակ՝ «չե՛ս գիս նանաչել» (Շ. Բագր., Պատմ., 46), «չեմ գիտել» (Մ. Ար., Գուս. ժող. տաղ., 42), «Որ չես առնել դու ուղորդ» (Ֆրիկ, Բան., 27), «չեմ ի տաւ» (ն. տ. 202), «չեմ կարեւ» (Մ. Ար., Գուս. ժող. տաղ., 171), «չեմ ի կենաւ» (ն. տ. 63), «չի թողուր» (էՄԳԱ, 106)) և այլն:

Այսպիսով, եթե աներևույթ ներգոյականից կազմված ներկայի և անցյալի անկատարի ժխտական խոնարհման ձևերը ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ են կրել, ապա հաս-

²⁸ Սրինականները բերված են Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկ»-ում զետեղված տեքստերից:

²⁹ Հ. Ղ. Վ. Յ ո վ ն ա ն ե ա ն, Հիտադօտությունք նախնեաց ռամկօրէնի վրայ, մասն առաջին, Վիեննա, 1897, էջ 151:

կանալի է, որ նույն աներևույթ ներգոյականից միատեսակ հիմունքով կազմված՝ ներկայի և անցյալի անկատարի զրական ու ժխտական խոնարհման ձևերը ևս (հմտ. ի խալալ եմ — չեմ ի խաղալ, ի տեսնուլ ևս — չես ի տեսնուլ, ի տալ էր — չէր ի տալ, ի լսել է — չէ ի լսել և այլն) էին կարող քարացած կամ անփոփոխ մնալ:

Գրավոր աղբյուրների փաստերն էլ իսկապես ցույց են տալիս, որ աներևույթ ներգոյականից և ժանդակ բայից կազմված ներկայի և անցյալ անկատարի զրական խոնարհման ձևերը, որոնք Ղ. Նովնանյանի հաստատմամբ հիմնականում գործ են ածվել արևելահայ հեղինակների լեզվում, իրենց ժխտականների հետ միասին ոչ թե մեռել ու դուրս են մղվել գործածությունից, այլ, նույնպես, մի կողմից՝ կորցնելով անորոշի ի նախդիրը, մյուս կողմից՝ այն (անորոշը) ենթարկելով՝ ձևափոխության՝ շարունակել են իրենց կյանքը հայերենի մի հատվածում: Դրա լավագույն ապացույցը վաղ շրջանի մի շարք գրավոր աղբյուրներում «ուս» դերբայով կազմված ներկայից և անցյալի անկատարից բացի. ժանդակ բայի և անորոշի ռազադրությամբ կազմված ձևերի գործածությունն է, ինչպես՝ «...լաւ որ աչք չի տեսնուլ (=աչք չի տեսնում,— Ա. Մ.)» (415), «...ինձ չեն քողուլ (=չեն թողնում — Ա. Մ.), որ գնամ ոտն ու ձեռն ընկնել...» (319)³⁰, «...գերայ բողազն անշափ լին այ, որ մէկ մէկի թօփ չի հասնուլ (—չի հասնում — Ա. Մ.)», «...ցամաքն հեռանալ չէ (—հեռանում չէ — Ա. Մ.)» (16), «Այս պատճառէս խաներն սայ ձեռաց տալ չեն (=չեն տալիս — Ա. Մ.)» (31)³¹ և այլն:

Ուսով անկատարից կազմված ներկայի և անցյալի անկատարի ձևերի շարքում վերոհիշյալ և՛ ընդհանրապես անորոշից կազմված ներկայի ու անցյալի անկատարի ձևերի գործածության փաստն ըստ էության ազդանշում է նրանց միջև եղած ծագումնաբանական կապը և հավաստում, ասենք, ի հասնուլ եմ > հասնուլ եմ > հասնում եմ, ի զնալ եմ > զնալ եմ > զնում եմ, ի տեսնուլ եմ > տեսնուլ եմ > տեսնում եմ և այլն ձևերի՝ նշված կերպարանափոխության հնարավորությունը:

Լեզուների համար ընդհանուր օրենք է, որ երբ մի հին ձևից առաջ է գալիս նոր ձև, ոչ թե միանգամից ջնջվում է հինը և տարածվում նորը, այլ նրանք շարունակում են գործածվել կողք-կողքի՝ երկար և այնքան ժամանակ, մինչև որ նորը վերջնականապես դուրս է մղում հինն և լիովին նվաճում նրա տեղը:

Ամենից առաջ այդ մասին է վկայում Վ. Արևելցու «Պատմութիւն տիեզերական» աշխատության հենց այն հատվածը, որտեղ ուսով անկատարի «աղօթք են առնում» ձևի կողքին գործ են ածված նաև՝ է ի վառիլ — «վառվում է», եմ յասել — «ասում եմ», հալալալ եմ — «հավատում եմ», եմ ի կոոփլ — «կոպում եմ», եմ յանձնել — «հանձնում եմ» ...աներևույթ ներգոյականով արտահայտված սահմ. ներկայի ձևերը:

Դրանց շարքում ուսով անկատարի եզակի օրինակի գործածությունը, անշուշտ, ոչ թե պատահական, այլ միանգամայն օրինաչափ երևույթ է, որ ազդանշում է համապատասխան ձևերի միջև եղած ծագումնաբանական կապը, հնից նորի առաջացման ընթացքը և ցույց տալիս, որ ուսով անկատարի նախավոր ձևը կամ նախահիմքը աներևույթ ներգոյականը կամ նախդիրվ անորոշն են: Աներևույթ ներգոյականից (նախդիրվ անորոշից) կարող էր ծնունդ առնել ուսով անկատարը, իսկ նրանով ու ժանդակ բայով արտահայտված ներկայի և անցյալի անկատարի ձևից՝ սահմ. ներկան ու անցյալի անկատարը. իմաստային նշանակության տեսակետից դա ասլա-ցուցման և ոչ մի կարգի չի զգում: Ուրեմն՝ տվյալ դեպքում կարևորը այն փոփոխությունների բացահայտումն է, որ հին ձևերին տվել է նոր կերպարանք, առաջ բերելով հայերենում մի նոր դերբայ և համապատասխան ներկայի ու անցյալի անկատարի բայաձևեր:

Այն ժամանակից սկսած, երբ աներևույթ ներգոյականը կորցնում է ի նախդիրը, իսկ գրաբարի անցյալ դերբայը իր եալ մասնիկը դարձնում է ել և այդ հիմքի վրա ել խոնարհման բայերի անորոշն ու վաղակատարը ձևով նույնանում են՝ տեղիք տալով իմաստի շփոթության, խառնուրդվում են աներևույթ ներգոյականով ու ժանդակ բայով արտահայտված ներկայի և անց. անկատարի գործածության հիմքերը և անհրաժեշտ նախապայմաններ ստեղծվում նրանց ձևափոխության համար. անորոշի օլ > վերջնահնչյունը եթե ժողովրդա-խոսակցական լեզվի մի մասում փոխարինվում է օլս-ով, ապա մի այլ մասում այն փոխարինվում է «մ»-ով: Պետք է ասել, որ դա տեղի է ունեցել ոչ այլ կերպ, քան աներևույթ ներգոյականի (անորոշ դերբայի) հետ գործածվող եմ ժանդակ բայի ազդեցությամբ և, հասկանալի է, ոչ թե միանգամից տարածվել է բոլոր բայերի վրա, այլ սկիզբ է առել որոշ, այն է՝ «նուլ» (սուլ)՝ ու վերջավորվող (ինչպես՝ ելնուլ-

³⁰ Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом.

³¹ «Ձաքարիա Աղուլեցու օրագրություն»:

ստեղծել, գտնել, հեծնել, տեսնել, քողով || քողնել, զարթնել, արգելել և այլն) բայաձևերից-
րորն է թիվը, ինչպես Հր. Աճառյանն է հաստատում, շատացել է միջին հայերենում³²:

Բավական էր, որ նման մի քանի բայաձևերում «լ» վերջնահնչյունը փոխարինվեր «մ»-ով (հմտ. ի տեսնուլ եմ — տեսնուլ եմ — տեսնում եմ), ում-ը կարող էր գիտակցվել և գիտակցվել է ուրպես ընթացի մեջ գտնվող կամ հաճախող զործողության ընդհանուր գաղափար արտահայ-
տող դերբայի մասնիկ: Որոշ բայաձևերից սկիզբ առնելուց և մի անգամ արդեն ուրպես դերբայա-
կան մասնիկ ըմբռնվելուց հետո նա, բնականաբար, ձեռք է բերում բերականական ընդհանրական
նշանակություն և զործածվում իբրև անկատար դերբայի կերտման ձևաբանական միջոց՝ բոլոր
տեսակի բայերի համար:

Երևույթը նման ընթացք է ունեցել արևելահայերի մեծ մասի խոսակցական լեզվում, որտեղ
1. անառարկելիորեն աներևույթ ներգոյականից (նախդրիվ անորոշից) և օժանդակ բայից կազմ-
ված ներկա և անցյալի անկատար ժամանակները ավելի սովորական լինելով՝ գործ են ածվել
ինչպես դրական, այնպես էլ ժխտական խոնարհման ձևերով: Իսկապես, արևելահայ բարբառնե-
րում ու խոսվածքներում, դրանց զարգացման օրենքներով ու առանձնահատկություններով պայ-
մանավորված, աներևույթ ներգոյականով ներկայի և անցյալի անկատարի երբեմնի ձևերը կեր-
պարանափոխվել են՝ տալով սահմ. եղանակի ներկայի և անցյալի անկատարի արդի ձևերը-
հաստատվում է իրական մի շարք փաստերով:

1. Նոր Զուղայի բարբառում, ինչպես Հր. Աճառյանն է նշում, «սահմանականի ներկան և
անկատար բացի սովորական ձևերից (օր. չեմ մաշում, չեմ մաշման, չի մաշում, չի մաշման)
ունի նաև մի երկրորդ ձև (ընդգծումն իմն է — Ա. Մ.), որ կաղմվում է էական բայի բայական
ձևը կցելով անորոշ եղանակին. այսպես չեմ մաշել (չչեմ մաշում), չի մաշել (չչի մաշում),
այլև՝ չեմ (չես, չի, չենք, չէք, չեն) խաղեն, խաղալ, մոռենալ և այլն»³³: Բայց եթե այդ և ման-ով
ձևերը գալիս են հնուց և իրենց հաստատուն հիմքերն ունեն գրաբարի ու միջին հայերենի գրավոր
աղբյուրներում, ապա գրանցում, ընդհակառակն, իսպառ բացակայում են «ում» անկատարով կազ-
մված՝ Նոր Զուղայի բարբառի սահմ. ներկայի և անցյալի անկատարի համար ևս սովորական
դիտվող ձևերը: Հարց է ծագում. ինչու պետք է սահմ. ներկայի և անցյալի անկատարի սովորա-
կան ձևերից մեկը իր նախավոր հիմքը ունենալ գրավոր աղբյուրներում, իսկ մյուսը՝ ոչ. այդպես
և՛ ինչու՞ պետք է անորոշով կազմվածները անցյալում գրավոր ավանդված լինեին, իսկ «ում»-
անկատարով արտահայտվածները՝ դարձյալ ոչ: Դա արդեն մի բացահայտ հակասություն է, որ-
սակայն, ցույց է տալիս, որ ում-ով ձևերը համեմատաբար ուշ առաջ եկած ձևեր են և ծագումնա-
բանորեն կապվում են անորոշով ներկայի և անցյալի անկատարի ձևերի հետ, որոնք և ոչ թե
միանգամից փոխարինվել են նորերով, այլ, տվյալ բարբառի առանձնահատկություններով պայ-
մանավորված, շարունակել են պահպանել իրենց գոյությունը նրանց կողքին:

2. Անորոշով ներկայի և անցյալի անկատարի ձևերի նախավոր և նրանցից ում-ով ներկայի-
և անցյալի անկատարի ծագած լինելու առաջին հավաստի ու լավագույն ապացույցը միավանկ
(տալ, զալ, լալ) բայերն են, որոնք հենց միավանկության պատճառով ում-ով ձև չունեն և նույն
Նոր Զուղայի բարբառում չեղելից հետո կամ հարցական նախադասության մեջ՝ հանդես են գա-
լիս «բոլորովին հարազատ ձևով», ինչպես՝ «Վորտեղի»-ց աս զոլ, հաց ին տալ. Յարախէքն ան լալ-
մարզ միտս ա զոլ»³⁴: Բայց եթե Նոր Զուղայի բարբառում միավանկ բայերը պահվել են բոլոր-
ովին հարազատ ձևով, ապա «ում» ճյուղի որոշ բարբառներում (Ղարաբաղ, Գորիս, Աստրա-
խան, Շամախի) իրենց «լ» վերջնահնչյունը փոխարինել են «մ»-ով, ինչպես՝ տամ էմ (էս, ա) —
տամ էնք (էք, էն), կ'ամ էմ (էս, ա) — կ'ամ էնք (էք, էն), տամ ի (իր, էր) — տամ ինք (իք-
ին), կ'ամ չէմ (չէս, չի — կ'ամ չէնք (չէք, չէն) և այլն: Կասկած չի կարող, որ տալ և զալ
բայերի խոնարհման այդ ձևերը սերում են աներևույթ ներգոյականով արտահայտված ներկայի
և անցյալի անկատարի նախավոր ձևերից և հանդիսանում են դրանց մի կերպարանափոխված տա-
րատեսակը, հմտ. ի տալ եմ>տալ եմ>տամ էմ..., ի զալ եմ>զալ եմ>կ'ամ էմ..., ի տալ
չեմ>տալ չեմ>տում չեմ..., ի զալ չեմ>զալ չեմ>կ'ամ չեմ... և այլն: Անվիճելիորեն առաջ եկած
լինելով նման ընթացքով՝ տամ, կ'ամ դերբայաձևերը իրենց եղանակա-ժամանակային ձևերի հետ
միասին մեծ կարևորություն են ներկայացնում նախ՝ այն տեսակետից, որ հաստատում են անո-
րոշի կրած !>մ ձայնափոխության իսկությունը և ապա՝ այն տեսակետից, որ պարզում են, թե

32 Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951:

33 Հր. Աճառյան, Քննություն Նոր-Զուղայի բարբառի, էջ 176:

34 Հր. Աճառյան, Հիականաբար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, Բ գիրք, էջ 178:

ինչու, այնուամենայնիվ, իրենք շեղվում են խոնարհման ընդհանուր կանոնից: Այսինքն՝ նրանք մի կողմից վկայում են, որ <1>մ ձայնափոխությունը կրել են բոլոր բայերն ընդհանրապես, իսկ մյուս կողմից ցույց են տալիս, որ իրենք ում չեն ստացել զուտ միավանկության պատճառով:

3. Անորոշ դերբայի կրած հիշյալ ձևափոխության իսկությունը հաստատող շավական գեղեցիկ ապացույց է տալիս Գորիսի բարբառը իր արգելական հրամայականի յուրահատուկ կազմությանը: Այնտեղ արգելական հրամայականի նախավոր՝ անորոշ դերբայից և մի (հոգնակի թվում՝ մի) արգելականից կազմված ձևերը, ինչպես՝ բերել (բերիլ) մի — բերել (բերիլ) մի, գնալ մի — գնալ մի, բողոլ մի — բողոլ մի, ուտել (ուտիլ) մի — ուտել (ուտիլ) մի և այլն, կեր-

ւլարանափոխվելով՝ դարձել են պուրում իլ — պուրում իլ, ֆինում իլ — ֆինում իլ, քողում իլ — քողում իլ, օտում իլ — օտում իլ և այլն: Ինչպես դժվար չէ նկատել, եզակի թվում տեղի է ունեցել յուրատեսակ դրափոխություն՝ անորոշի լ-ն անցել է արգելական մասնիկին, իսկ վերջինիս ու-ն՝ նրա տեղը. հոգնակի թվում՝ մի կողմից եզակիի նոր ձևի նմանողությամբ, մյուս կողմից արգելական մասնիկի (մի-ի) մի-ի ազդեցությամբ անորոշը ստացել է համանման ձև: Բայց տվյալ դեպքում ոչ այնքան դա, որքան այն է կարևոր, որ արգելական հրամայականում, իրեն ընդհանուր օրենք, անորոշը նույնպես չի պահպանում իր լծորդ ձայնավորը և հանդես է գալիս անկասարի տեսքով, ոմանց համար ստեղծելով այն պատրանքը, թե իբր «Սյունյաց բարբառում արգելական հրամայական եղանակի ձևը կազմվում է անկատար դերբայից»³⁵: Միանգամայն պարզ է, որ Գորիսի բարբառում ինչպես արգելական հրամայականի, այնպես էլ աներևույթ ներգոյականով արտահայտված սահմ. եղանակի ներկայի ու անցյալի անկատարի երբեմնի ձևերի անորոշը, թեև տարբեր ուղիներով, միատեսակ կերպարանափոխություն է կրել՝ հատկանշվելով ճիշտ միևնույն՝ ում կամ ում վերջավորությամբ (հմտ. օտում էմ — օտում էնք, օտում իլ — օտում իք, միևնույն՝ ում կամ ում վերջավորությամբ (հմտ. օտում էմ — օտում էնք, օտում իլ — օտում իլ, պուրում էմ — պուրում էնք, պուրում իլ — պուրում իք): Պետք է ասել, որ ոչ պատահականորեն այս դեպքում ևս բացառություն են կազմում միայն տալ և զալ բայերը, որոնց արգելական հրամայականը ներկայի և անցյալի անկատարի նման կազմվում է նույնպես տամ, և՛ամ ձևերով, հմտ. տամ էմ (<տալ եմ<ի տալ եմ) — տա՛մ իլ (<տալ մի):

4. Ազուլիսի բարբառում հարկադրական եղանակը ձևազմվում է մատամ ա կամ մատալ ա « մատիլ ձևով», իսկ Ցղնայի ենթաբարբառում այդ երկուսի տեղ գործածում են մէ՛տիլ ա, մատում ա»³⁶: Դրանցից մատամ (ա) և մատում (ա) ձևերն ըմբռնվում են իբրև անկատար դերբայի ձևեր (պիտում (է), պիտոյանում (է)», որոնք սերում են պիտիլ (է) անորոշից, առաջ եկած Ազուլիսի բարբառում՝ պիտիլ>մատալ, մատամ, իսկ Ցղնայի ենթաբարբառում՝ պիտիլ>մէ՛տիլ>մէտում ընթացքով: Ղարաբաղի բարբառում էլ նախավոր պիտիլ (է) ձևը դարձել է պետում (ա), որը իր հերթին նույնպես հաստատում է անորոշից բայական վերջավորության փոփոխությամբ ու-ով անկատար դերբայի առաջացումը:

Այս և նման այլ փաստերը ցույց են տալիս, որ աներևույթ ներգոյականով կամ նախորդի վերջավորությամբ արտահայտված սահմ. ներկայի և անցյալի անկատարի ձևերը հայոց լեզվի պատմական կյանքի ընթացքում բազմատեսակ կերպարանափոխություններ են կրել՝ առանձին բարբառներում ու խոսվածքներում, դրանց զարգացման օրենքներով պայմանավորված, երևան հանելով տարբեր դրսևորումներ: Ում ճյուղի բարբառների և դրանց հենքի վրա վեր բարձրացած արևելահայ գրական լեզվի սահմ. եղանակի ներկայի և անցյալի անկատարի ձևերն էլ հենց այդ տարբեր դրսևորումներից մեկն են հանդիսանում և այլ բան չեն, քան աներևույթ ներգոյականով ներկայի և անցյալի անկատարի այն ձևերի անմիջական ու օրգանական շարունակությունը, որոնց կերպարանափոխությունների բովում իսկ ուտեղծվել է ում-ով անկատարը:

Այսպիսով, թե՛ աներևույթ ներգոյականով սահմ. ներկայի և անցյալի անկատարի ձևերի նկատմամբ արևելահայ աշխարհարարի ուսմ. ներկայի և անցյալի անկատարի երևան հանած ի-Մաստային ընդհանրությունը թե՛ նրանց պատմական կյանքի ուղին պատկերող լեզվական փաստերը և թե՛ ժամանակի ընթացքում անորոշ դերբայի կրած բազմազան ձևափոխությունները մեզ այն համոզմանն են բերել, որ ում-ով անկատարը ծագումնաբանական ոչ մի կապ չունի ում-ով ներգոյականի հետ և սերում է բացառապես աներևույթ ներգոյականից:

35 Տե՛ս Н. А. Бартапетян, Сюникский диалект (автореферат диссертации), Ереван, 1962, էջ 22:

36 Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, Բ գիրք, էջ 137: